

ԵՂԵՈՆԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ՄԵՋ

Գշ, 23 Ապրիլ 2002.- Երուսաղեմի Երրայական Համալսարանի Գիվատ Ռամի շենֆին մէջ տեղի ունեցաւ «Կեանք Մահէն Վերջ» խորագրով Ապրիլեան Եղեռնին նուիրուած դասախօսական երեկոյ, որուն կը մասնակցէին ութսունէ աւելի հայ եւ հրեայ հետաքրքրասէրներ:

ԵՀ-ի Հայագիտական Ուսմանց քաժանմունքի հիմնադիր եւ վարիչ Տոքթ. Մայիլ Սթոնի նախաձեռնութեամբ իրականացած դասախօսութեան ներկայ էին նաեւ Պատրիարք Սրբազան Հայրը, ԵՀ-ի Ընդհանուր Ուսմանց քաժանմունքի տնօրէն պրոֆ. Գաբրիէլ Մոցգին:

Հրաւիրեալ դասախօսական կազմի մէջ էին վեց խօսնակներ իրենց ունեցած տարբեր նիւթերով.- Ս. Յակոբեանց միաբան Տ. Բագրատ Արդ. Պուրնէֆեան, Հայաստանի Պատուոյ հիւպատոս Յուլիկ Մոմենեան, Երուսաղեմի Հոլոգոստի եւ Եղեռնի Ինստիտուտի տնօրէն պրոֆ. Իսրայէլ Չարնի, Երեսնի Մանուկ Արեղեան Ինստիտուտէն եւ Ժողանգաւորաց Վարժարանէն Տոքթ. Սուրէն Արրահամեան, ԵՀ-ի Հայագիտական Ուսմանց քաժանմունքի դասախօս Տֆթ. Սերգիո Լա Փորտա եւ Ձեռագրերու Ուսումնասիրութեամբ նոյն համալսարանին մէջ մասնագիտացող Միխայէլ Առաքելեան: Տարբեր երեսներով ներկայացուեցաւ Եղեռնի սարսափելի իրականութիւնը համայն մարդկութեան եւ հայութեան համար մանաւանդ:

Պրոֆ. Մոցգինի ողջոյնի խօսքէն ետք, Պատրիարք Սրբազան Հայրը իր խօսքին մէջ յիշեցուց Եղեռնի այժմէական հարց լինելու պարտաւորութիւնը: Շնորհակալութիւն յայտնեց անոնց որոնք դրժելով պատմական իրականութիւնը կը ստիպեն մեզի միշտ արթուն եւ պահանջողի դերի մէջ մնալ: Գոհունակութեամբ անդրադարձաւ յայտագիրը վարող Տոքթ. Մայիլ Սթոնի եւ իր գործակիցներու Հայագիտական Բաժանմունքի մէջ տարած աշխատանքներուն համար:

Դշ, 24 Ապրիլ.- Մեծ Եղեռնի 87րդ տարեդարձի առիթով Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ Ս. Պատարագ եւ «Հոգեհանգստեան Պաշտօն», մասնակցութեամբ կրօնական համայնքներու հոգեւոր պետերու եւ ներկայացուցիչներու:

Այնուհետեւ, սգոյ թափօրը «Հայոց Պատրիարքարան» ճամբայէն ընթացք առաւ դէպի Արարայի յուշարձան կոթող, Հայոց Ս. Փրկիչ գերեզմանատուն: «Հոգեհանգստեան արարողութիւն»էն ետք, Միացեալ Յանձնախումբի անունով արտայայտուեցաւ Արամ Խաչատուրեան: Բազմութիւնը լուռ թափօրով վերադարձաւ Վանք, եւ Ժողանգաւորաց Վարժարանի շրջակայքին ու մեծ սրահին մէջ հոգեսուրբ հրամցուեցաւ:

ՍԳԱՀԱՆԴԷՍ.- Երեկոյեան, ԺՎ-ի մեծ սրահին մէջ «Ապրիլեան Յանձնախումբ»ի կարգադրութեամբ տեղի ունեցաւ սգահանդէս, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր: Յայտագրին մէջ խօսք առին երեք Միութիւններու ներկայացուցիչներ: Օրուան քանախօսն էր Բանասիրութեան Տոքթ. Գեորգ Բաղդիշեան, ԺՎ-ի Հայոց Լեզուի եւ Գրականութեան ուսուցիչ: Խմբական եւ անհատական երգերով հանդէս եկան ակումբները եւ Ժողանգաւորաց երգչախումբ:

Պատրիարք Սրբազան Հօր փակման խօսքին մէջ կար գոհունակութիւն ներկայացուածի համար, իսկ ապագայի նկատմամբ արդար պահանջք եւ յոյսը չկորցնելու փաշայերանք: Եղեռնի նահատակներու յիշատակը օրհնուեցաւ «Մահպահիչ»ով եւ «Հայր Մեր» Տէրունական աղօթքի երգեցողութեամբ: